

ԳՐԱԽՈՍՏՈՒԹԻՒՆ

Ա. ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՎԱՅԵՐԸ, բնագիրը յառաջարանով և ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց կ. Կոստան- ևանց. Արէքսանդրապոլ 1910 թ. զինն է 2 ռ. Արտասահման 5 ֆր.

Գըքի մէջ կան յառաջարան—խը. եր. բնագիր 244 եր. ծա- նօթութիւն, որի մէջ են յատուկ անունների ցուցակ, աղդ, զրքի բովանդակութեան ցանկ. վրիպակներ են. 241—352:

Յառաջարանի մէջ պ. կ. Կոստաննեանցը տալիս է Պահլաւու- նիների ծագման և Գրիգոր մագիստրոսի մասին բնդարձակ տեղե- կութիւններ. Գրիգոր մագիստրոսին բնորչելով որպէս Նկեղեցակը իշխան և որպէս Սուրբ զքքին, Հայոց պատմութեան (ըստ Մովսէս Խորենացոյ). յոյն լեզուի, զիտարանութեան և գրականութեան հմուտ բանասէր մատենագիր. Մագիստրոսը (80 եր. 10-13 տողը) «Որ տնկնցաւ յերկրի որթ ճշմարիտ և ճմլեցաւ և խաչին ողկոյզն անսպառ յուրախութեան տրամեցելոց» միայն գէմքերի փափոխու- թեամբ կրկնում է ԲԿ. աւագ օրհնութեան Գ. շարականի Բ. տունը. հաւանական է, որ ամբողջ այդ շարականը Մագիստրոսինը լինի, որովհետեւ ոճը նման է:

Գրիգոր Մագիստրոսի զիբքը մի ժողովածու է ընդարձակ և ոտանաւոր հատուածների, զրուած այլ և այլ մարդկանց զանազան ժամանակներում, զանազան առիթներով:

Մագիստրոսը ընդհանուրապէս գժուարըմբոնելի, կոպճու և ա- րուեստակեալ ոճ ունի, անհասկանալի և չինծու բառնի օրինակ մասիքոն (եր. 91) քոն պարս. լիառն է նշանակում: Յանցալի է, որ հրատարակիչը նման բարդութիւններն ու օտարաբանութիւնները պարզած լինէր: Յառախաղերն, հոմանիչ և նմանահոնցին բառերի շարանմանութիւնը Մագիստրոսի սիրած բաներն են: Մագիստրոսի ոճի մասին մի գաղափար տալու համար բերենք նրա մի առակը . . . «Արտօւախ զգուշութիւն երկնի յատորս կործանել, և նա անկեալ պորտ յորսայո. ուսն ի վերայ յերկին ջանայ կարկառել, զի մի եր- կին երկիր անկցի խախտուցեալ. պարսաւ առեալ ոմանց թէ որով ծղէ ծնկօք ծառանաս ծաթիկ քո ծալդ խելօք: Պատասխաննեալ հաւա- սաց. Որքան կարեմ զայն առնեմ: Արդ իմ ծղէ ծնդօքս. . .» (եր. 13):

Կամանուում է ասել. Արտօւաը զգուշանալով՝ որ երկինքը վայր չքնինի, մէջքի վրայ է բնկնում և ոտները վեր կարկառում: Տեսնե- այս՝ ծալդում են ու տուում: «Մտիլ. քո ծով խելքով ինչ ևս ծղէ ծնկներդ ծառացնում: Եսա պատասխաննում է. — Որքան կարող եմ, այն առնում եմ:

Սյու փոքրիկ հատուածը իւր մէջ բովանդակում է ա. Գրիգոր մագիստրոսի ոճի յատկութիւնը, թ. նոյն ժամանակի ժողովրդական լեզուի և մտածման հետք և գ. իրքե առակ ունի այն բարոյականը, թէ ոչ մի ոյժ, որքան էլ չնչին լինի, պէտք է չարհամարել և ամեն ոք ընդհանուր գործի համար որքան կարող է պէտք է աշխատի:

Արտօւախակեալ խրթնաբանութեան մի ուրիշ օրինակ. (եր. 238):

«Գեմագաւական Գեղանամ չոհացեալ՝ քեզ յայդմ պատահեալ տասի, տարակոյս տատանական արոնի զաարբեզուն կասկածանս տարբանելով վեւեսադոյն իմն ածեալ, լողթական փայտութեան անկառուցական վազից անսիթեցը»:

Ի՞նչ է կամենում ասել Մագիստրոսը, գոնէ իու համար անհասկանալի է Երեխ նրա թոռն Ներսէ Շնորհալին այսպիսի գրուածների համար է ասել.

Զի՞նչ օգուտ է ծածկել զրան

Գաղտնեօք մթին աղօտական.

Թէ չկամիս զիմաստու յայտնել՝

Ամենին կարես լոել,

Պ. Կ. Կոստանեանը Մագիստրոսի խրթնաբանութիւնը համարում է հետեանք արարական ազդեցութեան, նոյն ժամանակի խօսակցութեան բարբառի, յոյն իւրաստակներին հետեղութեան և օտար կամ օտարացած ու այժմ կիրառութիւնից դուրս մնացած անհասկանալի բառերի։ Պ. Կոստանեանի առարկութիւնը ընդունելի է բացառութեամբ մի կէտի, այն է, նոյն ժամանակի խօսակցական բարբառի իրաւ է, ժողովուրդը կարող էր օտարազգի բառեր գործածել, բայց տալ լեզուն արուեստակեալ ձեւ, անկարուզ էր։ Մագիստրոսը երբ կամենում է՝ զարմանալի պարզ լեզու, և մտքի աղդու արտայայտութիւն ունի, օրինակ (եր. 240)

«Ենցը ստուերի է փառք մարդոյ,

Հոլովի որպէս անուոյ,

Տարրերի նման հողմոյ,

Մինչ անկցի ի գուր տղմոյ։

Այս տեղ արդէն ամեն բառ իւր տեղումն է, ոչ մի բառ չի կարելի սղել, և այնքան պարզ, յատակ ու ազդու է, որ աւելին ցանկանալ անկարելի է։ Եւ այս պատահական բան չէ, այլ ամբողջ ոտանաւորը նոյն պարզութիւնն ու յատակութիւնը և լեզուի մաքրութիւնն ունի առանց արուեստակեալ ոճի և խրթնաբանութեան։

Պ. Կոստանեանցի հրատարակութեան ընագիրն է Մայր Աթոռիս մատենադարանի թ. 92 ձեռագիրը գրուած 1697 թ. կ. Պօյսուում։ Պ. Կ. ունեցել է ձեռքի տակ ուրիշ ձեռագիրներ էլ, որոնց ընթերցուածներով ուղղումներ է արել բնագրի մէջ, և որոնց ընթերցուածները զրել է առանձին։

Պ. Կոստանեանցը ծանօթութեան բաժնում (եր. 281—317) տալիս է Գրիգոր մագիստրոսի թզթակիցների մասին կենսագրական տեղեկութիւններ։ Ինքն Գրիգոր մագիստրոսը Պահլաւունեաց նոր շառաւիզի հինգերորդ սերունդն է և ասլել է ժա. զարում։

Պ. Կոստանեանցը հրատարակելով Մագիստրոսի թղթերը մի զովելի գործ է կատարել։ Նա հասարակաց սեղանի վրայ զրել է Ժ. գարի մի բազմաբովանդակ յիշատակարան բայց և մի զիտնական հրատարակութեան անպատշաճ բան է արել «Աղդ»—ի 364 երեսին ակնարկութիւններով։

Բ. Բժիշկ Գաբրիէլ Տէր Յովհաննէսէտն (Քաջքերունի) ուղարկել է մեր անուամբ մի քանի ձեռադիր տեսրակներ և թերթեր գրուած Ժ. և Ժ. Պարերում։ Այդ ձեռադիրը կը յանձնենք Մայր Աթոռի մատենագարանին, նախապէս Արարատի մէջ նըրանց իւազանչիւրի մասին, որոնք վոքք և շատէ ամբողջութիւն են կազմում, հետզհետէ համառօտ մատենախօսական տեղեկութիւններ տալով, ոկտած աց համարից։

Ի. Վառվառ Կուսի վկայաբանութիւն.—Անվարժ նոտր գիր, շունի յիշատակարան, ոկզբից թերատ. 21 երես, մեծութիւն 17 × 12 ս.մ.: Նման տպուած «Հայոց նոր վկաները» գրքի ը. հատ. եր. 295, ոկտած 7-ըսրդ տողից.—Առեալ ցնծութեամբ զնա և տարեալ . . . 2եռագում առաջ զրուած է «Յազագո հըրաշեց» (տպ. եր. 307, տող 15). և ապա Յազագո մաքսապետին . . . (եր. 206 տող 1):

Զեռագրում շը կան.

ա. Ներքողական տաղանագիր . . . գեղապանձ լոյս (տպ. եր. 311):

բ. «Երկորդ և երսրդ տապանագիրն «Վարդագոյն տիպումըն» և «Մեծ վայելչութիւն» (տպ. 312—313):

Զեռագրում աւելի է, որը և տպում ենք, «Երգո և վերայ Գւնիկցի նոր նահատակաց. Վառվառ գոչէ ատելով.

«Տարան այնտեղ, մէկ գիշերմ պահեցին,
Առաւոտուն ձիուն առջե խառնեցին,
Հեքիմներուն դէմն յերես հանեցին.

Քրիստոնի խաթեր լոյս հաւտիս համար:

Հարս ու մարս մեզի թողեց յիշատակ
Սուտ աշխարհիս յերեսն, ինչդ երթամ գարտակ.
Քուր ու եղբայր էղան մէկ տեղ նահատակ՝
Քրիստոնի խաթեր, լուս հաւտիս համար:

Տէր չունէի սուրբ Կարապետ տէր եղաւ,
Վառվառա կոյս քալո նստաւ քուր եղաւ.
Ո՞ր ան կերթամ ճամբանեցս ջուր եղաւ՝
Քրիստոնի թաթեր, լուս հաւտիս համար:

Զեռքս ստքս կապեցին, ձըկին մեծ յօտան,
Երած սրտիս հըշշատակներ ջուր կուտան,
Զիաւոր սրբունաք իմտատիս հասան,

Քրիստոնի խաթեր, լուս հաւտիս համար
Եօթն ամիս շատ չարչարանք քաշեցի,
Երեք գեղի մայ մազաթը լցուցի
Եկայ եկեղեցնա դուռը շատ լացի
Քրիստոնի խաթեր, լուս հաւտիս համար:

Եօթն ամիս շատ չարչաքանք թող քաշեմ,
Հոգիս դալարի, մարմինո մաշեմ,
Քանի որ շարչարուիմ որբունաք յիշեմ
Քրիստոսի խաթեր, լուս հաւտիս համար:
Խնձի մերկացուցին ձըկին մէկ պախչամ
Լուսէղէն շապիկն այնտեղ հազուցին
Տեսիք տարան, սուրբ գրախտը ցըրուցին,
Քրիստոսի խաթեր, լուս հաւտիս համար:
Յակոբ ազան դուռը դրախտին բացեց,
Քեսաներն հեքիմներու դէմն լցեց
Նահատակը մազէ շապկով պատնքեց
Քրիստոսի խաթեր, լուս հաւտիս համար:
Դւնիկեցի Վառվառ կուսի նահատակութիւնը կատարուել
է ՌՄԿ—1810 թ. յուլիսի 16-ին և ինչպէս երեսում է, մեծ
տպաւորութիւն է թողել ժողովրդի վերայ, որովհետեւ այդ նա-
հատակութիւնը արձանագրում էն, ընդամակ և ստանաւոր,
արժանահաւատ քաղաքացիներ Մատթէոս քհ., Հանէս վարժա-
պետ (նօտար) և իշխան Յակովը Մամիկոնեանի որդի Կարա-
պետը (Հ. Ն. Վ. Հա. թ. երես 225):

Դալի-Բաբայի սեպագիր արձանագրութիւնը

Ոռւսական Բասենի Աթլհան գիւղացի Պ. Կիրակոս
Տէր Աղէքսանդրեանից իմանալով, որ ոռոսական սահմանից
4 ժամ կամ մօտ 40 վերստ հեռաւորութեամբ, Էրզրումի
վիլայէթի Դալի-Բաբա գիւղի եկեղեցու աւազանի մօտ,
որմի մէջ դրուած է մի սեպագիր արձանագրութիւն,—
խնդրեցի նոյն պարոնին այդ արձանագրութեան ընդօրի-
նակութիւնը էստամպաժով կամ լուսանկարով ուղարկել
։ Էջմիածին, ուր նոյնպիսի արձանագրութիւնների մեծ
հաւաքածու կայ։

Պ. Կ. Տէր Աղէքսանդրեանը յայտնում է, որ փետր-
վարի 3-ին գնացել է Դալի-Բաբա, կամեցել է էստամպա-
ժով սեպագրի ընդօրինակութիւնը վերցնել. բայց չէ յաջո-
ղել որովհետեւ, գրում է նա. «Ղմբաղգաբար չը գտնուեցին
ծծան թուղթ և ուրիշ թղթեր, Երևկայեցէք 150 ծիից բաղ-
կացած մի հայտնակ գիւղ, ուր նստում է գաւառի միւ-